

կը հասնիմք, որոնք ժայռի մէջ փորուած են, և իրապէս անոնք են որոց վրայ խօսած է Նեեմի: կը տեսնուին հոն քանի մը գրուածքներ երբայերէն կամ յունարէն լեզուաւ. և սրբոց քանի մը նկարներ գրեթէ բոլորովին եղծեալ:

Համբաւաւոր է այս հովիտը Մողղը չաստուածոյն ընծայուած հեթանոս և պիղծ պաշտամանց համար. անոն գարշելի, որուն շատ անգամ ծնողք կը զենուին իրենց որդիքը և կը մաշէին բոցոյ մէջ, ինչպէս կը կարգաւմը թագաւորաց գրքին մէջ: Անմեղ զենեւըց աղաղակը, և թերևս աւելի ծնողաց սրտին խայթը մարելու համար, ամպարիչտ չաստուածոյն պաշտօնեայքը գործի մը կը հնչեցընէին երբայական լեզուաւ. Թիւր քսուած, ուսկէց ետքը այն տեղը ուր այս գրհերն կ'ըլլային Թորէք ըսուեցաւ: Գերութենէն դառնալէն ետքը, եբբայեցիք զարհուրանօք կը նայէին այն տեղեաց վրայ, յիշելով հոն գործուած զարշուծիւններն. ուստի այն տեղն աղբւս ըրին, և կենդանեաց ոսկորոտիքը և չարագործաց մարմինը կը նետէին հոն: Իսկ ժանտախտը արգիլելու համար, որ այս նիւթոց փտութենէն կըրնար պատճառել, կրակով կը մաշեցընէին զանոնք, որ ստէպ կը վառէր հովտին մէջ, ուստի այն տեղն Գեհեան ըսուեցաւ:

Չար խորհրդոյ բլրան մէջ տեղուանքն, դեանոյ անձուկ լեզուի մը վրայ, դեռ մնացած են քառակուսի մեծ շէնքի մը աւերակներ: Այս շէնքը կը գտնուի Ալեդդաւա ըստուած տեղոյն վրայ, որ կը նշանակէ Գեոյ արևսն, վասն զի ճիշդ այն գետինն է զոր քահանայք գընեցին Յուդային ետ զարձուցած մատնութեան ստակով, և սահմանեցին զերեզման օտարաց:

կը շարունակուի:

ՀԻՆԳ ՇԱՐԱԹ ՕԴԱՊԱՐԿԻ ՄԷՋ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ԱՆԴՂԻԱՑԻՈՑ

ՅԱՓՐԻԿԷ:

(Տես էրես 121):

ԳԼՈՒԽ ԻԷ.

Բաւականորեան եշակք. — Գաղղիացի հեղինակի մը երեսակայական գաղափարներ. — Շքեղագարդ երկիր. — Ատամուխայի քաղաքորոտիներ. — Մրիք ու Պրիդրէի քննորոտիները Պարթիս քննորեանցը հետ շաղկապեալ. — Ատլանդիկայի լերիներ. — Պրևուէ գետը. — Խոյս քաղաքը. — Պաժեկէն. Մանտիֆ լեռ:

Մեր ուղևորները ճամբայ ելլելէն ետև՝ մեծ երազութեամբ քալեցին. կը փութային այն անապատէն հեռանալու որ քիչ մնացեր էր իրենց այնքան չարաշուք պիտոր ըլլար:

Առաւօտեան ժամը ինն քառորդ անցած ատենները, բուսականութեան հետքեր սկսան տեսնուիլ. այն աւազէ ծովուն մէջ ծփացող խոտեր էին, որ ինչպէս եղաւ Քրիստափոր Գոլումպոսին, ցամաքին մերձակայութիւնը կ'ազգէին. կանաչ տունկեր ինչպէս թէ վախով տերևին կոպիճներու մէջէն կը ցուցընէին, կոպիճք որ հետզհետէ մեծնալով՝ այն ուկիանոսին մէջ ժայռեր պիտոր փոխուէին:

Ցած բլուրներ հորիզոնին վրայէն ելլէլ կը խաղային. իրենց կերպարանքը մառախոլէն մթագնեալ անստոյգ կերպով կ'որոշուէր. այսպէս կամաց կամաց անապատին միակերպութիւնը կը ջնջուէր:

Տորդորը խնդութեամբ այն նոր երկիրը կ'ողջունէր, և ինչպէս նաւաստի մը ՚ի դիտի, գրեթէ՝ ցամաք, ցամաք, կանչել կ'ուզէր:

Ժամ մը ետքը բուսաբեր գետինը աչացը առջին կը պարզէր, որու տեսիլը թէպէտ վայրենի դեռ ևս, այլ նուազ տափարակ էր, և ոչ այնքան մերկ, գոր-

չազոյն երկնից վրայ ալ մէկ քանի ծառոց ուրուագիծը կը գծադրէր :

— Քաղաքականացեալ երկրի վրայ կը գտնուինք ուրեմն, ըսաւ որսորդը :

— Քաղաքականացեալ, պարոն Տիք . ըսածդ խօսելու կերպ մըն է . դեռ ևս բնակիչք չեն տեսնուիր :

— Մեր այս քալած կերպովը շատ չերկարենք պիտի մարդ տեսնելու, պատասխանեց Ֆէրկըսըն :

— Միթէ դեռ ևս սևամորթից երկիրն ենք, պարոն Սամուէլ :

— Այո՛, ճոյ, Արաբացոց երկրին մնալով :

— Արաբացոց, պարոն, բուն ուղտի տէր Արաբացոց :

— Ոչ, անուղտ Արաբացոց . ուղտը հազուագիւտ են այս երկիրներս, անգտանելի չուղելով ըսել . անոնց պատահելու համար հարկ է քանի մը աստիճան դէպ 'ի հիւսիս ելլել :

— Ափսոս է :

— Ինչո՞ւ համար, ճոյ :

— Որովհետեւ եթէ հովը հակառակ փոխուէր, կրնային ծառայել մեզի :

— Ի՞նչպէս :

— Պարոն, մտածութիւն մըն է որ միտքս կը ծնանի . կարելի էր զանոնք նաւակին լծել որ ձգեն տանին զմեզ . ասոր ինչ կ'ըսես :

— Խեղճ ճոյ, այդ մտածութիւնը քեզնէ առաջ ուրիշ մը ունեցեր է . Գաղղիացի շատ զուարճաբարոյ հեղինակ մը՝ նոյնը փորձի դրած է... այլ վիպասանութեան մը մէջ, յիշաւի : Օդապարկաւ ճանապարհորդք իրենց դունտը ուղտերու լծած քաշել կու տան . առիւծ մը վրայ կը հասնի, ուղտերը կը պատռտէ կ'ուտէ, չուանը կը կլլէ և անոնց տեղը ինքը զգունտը կը ձգէ կը տանի : կը տեսնես որ այս ամենը երևակայեալ վէպք են, և մեր տեսակ տեղափոխութեան վերաբերութիւն մը չունին :

Ճոյ քիչ մը տխրած որ իր մտածութիւնը արդէն կանխաւ ծառայած էր,

1 Պարոն Մէրի :

մտածեց թէ ինչ կենդանի կրնար զառիւծը պատռտել ուտել . այլ չկրցաւ գտնել մէկ մը, և այնպէս սկսաւ այն երկիրը դիտել :

Իր աչաց առջին միջակ տարածութեամբ լիճ մը կը պարզէր, ամիթիթա տրոնի նման բլուրներու շարքով մը, որոնք դեռ ևս լեռ կոչել կարելի չէր . բազմաթիւ արգաւանդ հովիտք, իրենց զանազան տեսակ ծառոց խառնակ ծառախիտներովը այն բլրոց մէջ օձապտոյտ խաղերով կը պարզէին . այն բազմաթիւ ծառախիտներուն մէջէն Էլչայս ծառը կը դերազանցէր իր տանը հինգ ոտք երկայնութեամբ տերևներովը և սրածայր փուշերով ցցուած բնովը . պոմպայն իր սերմանց փափուկ աղուամազովը զհովը կը լեցնէր . բաւնդաւուրի զօրաւոր բոյրը, այն որ Արաբացիք քեւտաւ կը կոչեն, մինչև այն բարձրութիւն օդը կը լեցնէր՝ ուսկից վիկտորիան կ'անցնէր . արմաւենիի նման տերևներով թաքեյէն, Սոէքքիշիէն ուսկից կ'ըլլայ Սուտանի ընկուզը, պառպապը և պանանք՝ այն հասարակածի զաւառաց չքեղ բուսականութեանը լրումն էին :

— Այս երկիրս, շատ չքեղազարդ երկիր մըն է, ըսաւ տղորդը :

— Ահա կենդանիներն, կանչեց ճոյ . մարդիկ ասկէ հեռու ըլլալու չեն :

— Ա՛հ, գեղեցիկ փիղերն, կանչեց Քէննըտի : Արգեգը միջոց մը չըլլայ պիտի քիչ մը որսորդութիւն ընելու :

— Հապա ինչպէս կրնանք կանկ առնուլ այսպիսի բուռն օգու հոսանքով մը, սիրելիդ Տիք : Ոչ, Տանտաղոսին չարչարանքը դու ալ քիչ մը կրէ . քիչ մը ետքը ասոր փոխարէնը կ'ընդունիս :

Որսորդի մը երևակայութիւնը գրգռելու բան կար հոն տեղուանք . Տիքին սիրտը կրծոց տակէն մեծ մեծ կը զարնէր, ու մատուրներովը իր բըրտի հրացանին կրուկը կը սեղմէր :

Այս երկրիս կենդանական ազգը բուսականաց չքեղութեանը հաւասար էր : վայրենի եզր խիտ խոտի մը մէջ ընկըղ

մելով՝ բոլորովին անյայտ կ'ըլլար. ա. մենամեծ հասակաւ գորշ, սև կամ դեղին փղեր, թաթառի մը պէս անտառներուն մէջէն կ'անցնէին, խորտակելով, մաշեցնելով, աւարելով և տպականութեամբ իրենց անցքին հետքը թողլով. բլրոց անտառալից զառ 'ի վայրին վրայ ջրի սահանքներ և առուակներ ծորելով՝ դէպ 'ի հիւսիս ընթացքնին կ'առնուին. ձիագետիք մեծ աղմուկ հանելով՝ այն ջրոց մէջ կը լողային, և տասուերկու ոտք երկայնութեամբ ձրկնակերպ մարմնով լամանդէնք, կաթնալից ստիկներին դէպ 'ի երկինքը տրնկած փանցը վրայ խուռած կը հանգչէին:

Տնկոց հրաշալի ջերմանոցի մը մէջ սակաւագիւտ կենդանեաց կատարեալ փակարան մըն էր, ուր անթիւ և հազարումէկ գոյներով թռչունք՝ ծառակերպ տնկոց մէջէն կը շողշողային:

Այն շուայլ բնութեան զարդարանքը անանելով տղքորը, իսկոյն երկիրը Ատամովայի թագաւորութիւնն ըլլալը ճանչցաւ:

— Նորագիւտ երկիրները կը մանենք, ըսաւ. ճանապարհորդաց ընդհատեալ հետքը գտայ. բարեբաղդ դէպք մըն է, բարեկամք. հիմա կարենանք պիտի Պըրդըն ու Սըիք գնդապետաց գիւտերը տղքոր Պարթին քննութեանցը հետ շաղկապել. Անգղիացիներ թողլով Համպուրկցի մը գասնք, և քիչ ատենէ այդ յանդուգն գիտունին հասած վերջին կէտը պիտի հասնինք:

— Ինձի կ'երևնայ, ըսաւ Քէննըտի, որ երկու կողմի քննութեանց մէջ, ընդարձակ երկիր մը կայ, եթէ մեր ըրած ճամբան աղէկ դիտելու ըլլանք:

— Դիւրին է հաշիւն ընել. աշխարհացոյց տախտակն առ ու դիտէ թէ ինչ լայնութեան տակ կը գտնուի Ռքէրէուէ լճին հարաւային ծայրը, ուր Սըիք հասեր է:

— Գրեթէ երեսներորդ եօթներորդ աստիճանին վրայ կը գտնուի:

— Հապա ի՞նչա քաղաքը, որուն յատակագիծն այս իրիկունս պիտոր առնունք, և ուր հասաւ Պարթ, ինչ դիրք ունի:

— Երկայնութեան գրեթէ երկուտասներորդ աստիճանին վրայ է:

— Ուրեմն այդ չափը քսանըհինգ աստիճան կ'ընէ. իւրաքանչիւրը վաթսուն մղոն ըլլալով, հազար հինգ հարիւր մղոն՝ կ'ընէ:

— Պտըտելու գեղեցիկ միջոց մը, ըսաւ ճոյ, հետի զնացող մարդոց համար:

— Եւ սակայն այդ բանը ըլլայ պիտի: Լիվընկսդըն և Մոֆֆա շարունակ դէպ 'ի ներսերը կը յառաջեն. Նիասան որ գտան, Պըրդընի տեսած Դանկանախքա լճէն շատ հեռու չէ. դարս չլմընցած անտարակոյս բոլոր այդ անհուն երկիրներուն քննութիւնը լրանայ պիտի: Բայց, ըսաւ տղքորը՝ ուղղեցոյցը նայելով, կը ցաւիմ որ հովը զմեզ շատ դէպ արևմուտք կը տանի. կը փափաքէի դէպ 'ի հիւսիս ելլել:

Տասուերկու ժամ ճամբէ ետքը վիկուրիուս Նիկրիտիոյ սահմանները հասաւ. Այն երկրին առաջին բնակիչք Շուացի Արաբացիք, իրենց վրանաբնակ հօտերը կ'արածէին. Աղլանդիքա լեռանց ընդարձակ կատարները հորիզոնէն վեր կը ցցուէին. այս լեռներուս հողը դեռ ևս եւրոպացւոյ մը ոտքը չէ կոխած. իրենց բարձրութիւնը գրեթէ հազար երեք հարիւր գրկաչափ կը համարուի: Անոնց արևմտեան կողմի զառիվայրէն է որ Ափրիկէի այս կողմի բոլոր ջրերը դէպ 'ի ովկիանոս կը հոսեն. ասոնք այս աշխարհիս Լուսնի լեռներն են:

Վերջապէս բուն գետ մը ճանապարհորդաց աչացը առջին ելաւ, և տղքորը անոր մերձակայքը գտնուած անհուն մեծութեամբ մըջնաբոյնները դիտելով, հասկցաւ որ Պէնուէ գետն էր, որ Նիճէրի մէջ թափուող մեծագոյն

1 Վէց հարիւր քսանըհինգ փարսախ:

գետերէն մէկն է, և երկրին բնիկը « չրոց աղբիւրը » կոչեր են :

— Այդ գետը, ըսաւ տորգորն իր ընկերներուն, օր մը Նիկրիտիոյ ներսի տեղերուն հետ հաղորդակցութեան բնական ճամբան պիտոր ըլլայ. արդէն յիշուաւ շոգեհաւը, մեր կտրիճ նաւապետաց մէկի մը հրամանատարութեամբը՝ մինչև իոլա քաղաքը վեր ելեր է. կը տեսնէք որ ծանօթ աշխարհքի մը մէջ կը գտնուինք :

Բաղմաթիւ գերիներ դաշտերու մը շակութեան զբաղած էին, սորկոյ մշակելով՝ որ կորեկի տեսակ մըն է և իրենց սննդեան գլխաւոր ուտելիք. ապուշ զարմացմամբ ամենքը վիկտորիայի անցնելուն կը նայէին, որ մտէորայի մը պէս կը սահէր : Իրիկուան դէմ իոլայէն քառասուն մըն հեռու կանկ կ'առնուր, և իր առջին, այլ հեռուանց, Մանտիֆ լերան երկու սրածայր կոնները կը ցցուէին :

Տորգորը խարիսխները նետել տուաւ, ու բարձր ծառի մը գագաթը կուռելով դադարեցաւ. այլ խիստ քամի մը ըզվիկտորիան հորիզոնաբար պառկեցընելու չափ օդուն մէջ կը տարուբերէր, երբեմն երբեմն նաւակին վիճակը վերջի աստիճանի վտանգաւոր ընելով : Ֆէրկըսըն բոլոր դիշերն աչք չգոցեց. շատ անգամ արգելական բռնող չուանը կըտրելու մօտ եղաւ որպէս զի այն սաստիկ հովուն առջևէն փախչի : Վերջապէս մրրիկը հանդարտեցաւ, և ալ օդապարկին ճօճմունքները ամեն վտանգէ ազատ մնային :

Յաջորդ օրը հովը նուազեր էր, սակայն զճանապարհորդները կը հեռացընէր իոլա քաղքէն, որ կրկին անգամ ֆուլաններէն շինուած քաղաք մը ըլլալով, Ֆէրկըսընի հետաքրքրութիւնը կը գրգռէր. հանդերձ այսու հարկ եղաւ թոյլ տալ դէպ 'ի հիւսիս ելլելու և նաև քիչ մըն ալ դէպ արևելք :

Քէննրտի առաջարկեց որ այն որսորդութեան երկրին մէջ քիչ մը կանկ առնուն. ճոյ ալ կը վկայէր թէ թարմ

մսին կարօտութիւնը զգալի կ'ըլլար. սակայն այն երկրին վայրենի սովորոյթք, ժողովրդեան սպառնալից կերպարանքը, վիկտորիայի և ուղղութիւն արձըկուած մէկ քանի հրացանի հարուածք, ստիպեցին զտորգորն որ իր ճամբան շարունակէ : Այն ատեն անանկ երկրի մը մէջէն կ'անցնէին, որ անընդհատ սպանութեանց ու հրդեհներու տեսարան է. կոիւններն ոչ երբեք կը դադարին այն տեղուանք, և պատերազմունք ամենէն կատաղի ջարդերով, որոնցմով սուղանք իրենց արքունի թագը վտանգի մէջ կը դնեն :

Երկայն տուներով բաղմաթիւ ու բաղմամարդ գիւղեր, ընդարձակ արօտներուն մէջ ցրուած կը տեսնուէին, և անոնց խիտ խոտը մանուշակագոյն ծաղիկներով խառն էր. հիւղերը, մեծ փեթակներու նման, ցցապատ պատնէշներու ետևը պատսպարած էին : Բըլրոց վայրենի զառիվայրները՝ Սկովտիոյ բարձր երկիրներու պզտի անձուկ հովիտները կը յիշեցնէին, զոր շատ անգամ դիտելով զուրցեց Քէննրտի :

Հանդերձ տորգորին ըրած բոլոր ճըգամբքը, գունտը հիւսիսային արևմտեան կողմը կը դիմէր, դէպ 'ի Մանտիֆ լեռը, որ ամպերու մէջ պատած չէր տեսնուեր. այս լեռանց բարձր գագաթները Նիճէրին աւազանը Չատ լճէն կը բաժնեն :

Շուտ մը Պաժըլէն տեսնուեցաւ իր տասնութը գիւղերովը, որ ինչպէս տըղայոց բաղմութիւն մը իրենց մօրը գիւղը, այնպէս այն գեղերը լեռան կողերուն վրայ կախուած են. գեղեցիկ տեսարան արդարև այն աչաց համար, որ բարձրէն անոնց ամբողջութեանը տիրելով կը դիտեն. լեռանց խոխովքը բերինձի արաչնիտի դաշտերով ծածկած կ'երևնային :

ժամը երեքին վիկտորիան Մանտիֆ լեռան դիմացը կը գտնուէր : Կարելի չէր եղած անոր չմօտենալ, ուստի հիմա հարկ էր անոր վրայէն անցնիլ. տորգորը գունտին բարեխառնութիւնը հարիւր ութ-

սուն¹ աստիճանի ջերմութեամբ անցընելով, Օդապարկին գրեթէ՝ հազար վեց հարիւր լորի վերելական նոր ուժ մը տուաւ, որով գունար ութ հազար ոտքէ աւելի բարձրացաւ: Այս ճամբորդութեանը մէջ ամենէն բարձր ելած կէտերնին այս եղաւ, և օդուն բարեխառնութեան աստիճանը այն աստիճանի նուազեցաւ, որ տղդորն և իր ընկերները հարկ եղաւ ծածկոյթնին վրանին առնուն:

Ֆէրկըսըն անապարեց վար իջնալու. օդապարկին պատեանը ճաթելու չափ կ'ուռէր. սակայն և այնպէս կրցաւ դիտել լեռան հրաբղխային ծագումը, որուն մարած բերաններն ալ խոր անդունդք են: Թուշնոց աղբի մեծ կոյտեր Մանտիֆ լեռան կողերուն կրային ժայռերու երևոյթ կու տային, և այնպէս առատ էր աղբը՝ որ բոլոր Միացեալ թագաւորութեան երկիրները պարարտացնելու բաւական էր:

Ժամը հնգին վիկտորիան, հարաւային հովերէն մէկ դի պատսպարած, հեզիկ հեզիկ լեռան զառիվայրէն շիտակ վար կ'իջնէր, և ծառազուրկ բաց տեղ մը՝ հեռի յամենայն բնակութենէ՝ կանկ կ'առնուր. անմիջապէս որ գետինը դպաւ, ամենայն զգուշութիւն ՚ի կիր առին որ զայն ամուր վար բռնեն. և քէննրտի հրացանը ձեռքն առած՝ դարովար դաշտին մէջ յարձկեցաւ. քիչ մը ետքը ձեռքը վեց հատ վայրենի բազբունած և մէկ կտցարի տեսակ մին ալ ետ դարձաւ, զորոնք ճոյ կրցածին պէս աղէկ պատրաստելով եփեց: Կերակուրնին շատ ախորժահամ կերան, գիշերն ալ ամենայն հանգստեամբ անցուցին:

Կը շարունակուի:

¹ Հարիւրաստիճանի 100°:

ՅՈՒՅԱԿ

ԳԻՏՈՒԹԵԱՆՅ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻՅ ՅԻՏԱԼԻԿԱ

ՎԵՅԵՐՈՐԴ ԴԱՐԷ ՄԻՆՁԵՒ Ի ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՍ

(Տես էրես 104.)

Յետ խօսելու Պատմութեան և Բանաստեղծութեան վրայ, որովք նշանաւոր եղաւ այս յեղանակս, աւելորդ համարիմք ուրիշ տեսակ դպրութեանց վրայ խօսիլ, թէ և շատ գրուածք կան, ինչպէս են լատինարանք, քերականք, վիպազրոյցք, բարոյախօսք և իմաստասէրք. որք աւելի գրաւորաբար քան գիտնաբար գրեցին, Արիստոտելէն հեռանալով Պլատոնի մօտենալու համար, իսնգարեալ նմանողութեամբ մը: Մեր հին կենսագիրք՝ ասոնց չափազանց յարգ ընծայած են. մեզի ուրիշ բան չիմնար՝ բայց եթէ զանազանել համեմատական մեծութիւնը դրական մեծութենէն:

Արդեօք թե դարու՝ իտալական զրպրութիւնն օտարազգեաց դպրութենէն շատ գերազանց էր: — Պէտք է խոստովանիլ, որ հիմակուան օտարաց զրպրութիւնն կը գերազանցէ քան զմերս. և եթէ մենք առաջնութիւն ունինք, չենք կըրնար ըսել թէ և գերազանցութիւն. բայց եթէ ազգային նախանձով կուրնանք և ուրանանք այն զարմացքը՝ զոր արժան է ընծայել մեզմէ չեղածին և մեզի նմանողութեան առիթ եղածին: Եթէ Ալֆիերի և Մանցոնի ալ ազգայնութեան պարտքը ուրիշ կերպ հասկընային, չէին կըրնար ողբերգութիւնը և վիպասանութիւնը աւելցընել իտալական դպրութեան հին դանձուց վրայ:

Այս յեղանակիս մէջ բնական իմաստասիրութիւնն ալ չզարգացաւ յիտալիա. Լեհացին Քոբեռնիք (1473-1543) սեփականեց զայն: Կ'ըսուի թէ իր գիտերն իրմէ առաջ ալ անծանօթ չէին յիտալիա. սակայն ճշմարիտն ըսելու համար, մեր այն ժամանակի աստեղա-